շրջանից մինչև Արշակունյաց հարստության անկումը։ Երկրորդ հատորում վերլուծված են Արշակունյաց ժամանակաշրջանի պատմության հիմնական պրոբլեմները։ Երրորդ հատորն ընդգրկում է Հայաստանի պատմությունը XI—XV դարերում։ Այս աշխատությունը հայ ժողովրդի պատմությանը նվիրված ամենանշանակալից աշխատություններից մեկն է և անգնահատելի ավանդ հայագիտության բնագավառում։ Հ. Մանանդյանի մեծարժեք հետազոտությունները, նրա հարուստ փաստերը ուրույն տեղ ունեն ինչպես հայագիտության, այնպես էլ սովետական պատմական գիտության գանձարանում։

Հակոբ Մանանդյանի մասին հետաքրքիր հուշեր պատմեցին Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, թղթակից-անդամներ Մ. Հասրաթյանը, Լ. Խաչիկյանը և պրոֆ. Կ. Ղաֆադարյանը։

Ակադեմիկոս Հ. Մանանդյանի կյանքին և գործունեությանը նվիրված զեկուցումից հետո սեսիայի մասնակիցները լսեցին Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Լ. Խաչիկյանի «XVII դարի հայ վաճառականի ուղեմատյանը» գիտական հաղորդումը։ Ընթերցվեց նաև Հայկական ՍՍՌ ակադեմիկոս Ս. Երեմյանի «Նաքշի Ռուստամի՝ Շապուհ Առաջինի եռալեզվյան արձանագրությունը Հայաստանի մասին» զեկուցումը։

Ա. Գ.

ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈ

Երևանի գիտական հասարակայնությունը նշեց պետական համալսարանի փիլիսոփայության ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Հենրի Գաբրիելյանի ծննդյան 60 և հասարակական ու գիտա-մանկավարժական գործունեության 40-ամյակը։ Նոյեմբերի 22-ին տեղի ունեցավ համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի նիստը, որտեղ բազմավաստակ գիտնականի ու մանկավարժի կյանքի ու գործունեության մասին զեկուցեց դոցենտ Ղազար Վարդապետյանը։

Հ. Գաբրիելյանը շուրջ 20 տարի գլխավորում է Երևանի համալսարանի փիլիսոփայության ամբիոնը, վարում փիլիսոփայության պատմության և հայ փիլիսոփայական մտքի պատմության դասընթացները։ Ակնառու է նրա վաստակը մարքս-լենինյան փիլիսոփայության մասնագետների պատրաստման ասպարեզում. 20-ից ավելի երիտասարդներ նրա ղեկավարությամբ պաշտպանել են թեկնածուական դիսերտացիա։

Հ. Գաբրիելյանը Սովետական Հայաստանում մարքս-լենինյան փիլիսոփայության, կոմունիստական գաղափարախոսության անխոնջ պրոպագանդիստներից մեկն է։ Եվ պատահական չէ, որ նա հիմնադրման օրից ղեկավարում է «Գիտելիք» հանրապետական ընկերության փիլիսոփայական մասնաճյուղը։

Այս բոլորի հետ միասին Հ. Գաբրիելյանը հետազոտող գիտնական է։ Տակավին երիտասարդ, նա հանդես եկավ իր առաջին փիլիսոփայական հոդվածով, իսկ այժմ նրա աշխատությունների թիվն արդեն անցնում է 100-ից (որոնց մեջ կան տասից ավելի մենագրություններ)։ Չափազանց լայն է պրոֆ. Գաբրիելյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը։ Այդ են վկայում նրա հետևյալ աշխատությունները. «Գիտությունը և նրա դերը հասարակության մեջ», «Հեգելի զարգացման թեորիան և մարքսիզմ-լենինիզմը», «Սոցիալիստական հասարակության հակասությունները և նրանց հաղթահարման ուղիները», «Ժամանակակից սփյուռքահայ բուրժուական ռեակցիոն փիլիսոփայությունը»։ Սակայն Հ. Գաբրիելյանի գիտական հետազոտության հիմնական բնագավառը հայ փիլիսոփայական մտքի բազմադարյան պատմությունն է։ 1946 թ. լույս տեսավ նրա աշխատությունը Գալուստ Կոստանդյանի մասին, իսկ 1956 թ. սկսեց հրատարակվել բազմահատոր «Հայ փիլիսոփայական մտքի պատմությունը», (Ա հատոր՝ 1956, Բ հատոր 1958, Գ հատոր՝ 1959, Դ հատորը պատրաստ է տպագրության)։ Երկար տարիների ուսումնասիրությունների արգասիք հանդիսացող այս երկն ընդգրկում է հայ փիլիսոփայական մտքի պատմությունը նրա ծագման շրջանից մինչև մեր օրերը։ Աշխատության ամփոփումը լույս է ընծայվել ռուսերեն մի հատորով։

Հոբելյարին ողջունեցին Երևանի մի շարք բարձրագույն ուսումնական հիմնարկների և հասարակագիտական ամբիոնների ներկայացուցիչներ։

Վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ հոբելյարը։

Մ. ՄԵԼԻՔՅԱՆ